ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 115

03 դեկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առաջարկությունները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի այն բնակավայրերի վարչական ղեկավարները, ովքեր կհավաքագրեն և կապահովեն հողի հարկի և հողի վարձակալական վճարի 50 և ավել % պլանային ցուցանիշները, կվարձատրվեն Անի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի համաձայն, իսկ այն բնակավայրերի վարչական ղեկավարները, ովքեր չեն կարող հավաքագրել և ապահովել հողի հարկի և հողի վարձակալական վճարի մինչև 50 % շեմը, առաջարկվում է.

1/նրանց հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր և աշխատավարձը սահմանել ավագանու որոշմամբ սահմանված աշխատավարձի 50 % չափով՝ հիմք ընդունելով եռամսյակային ու տարեկան ցուցանիշները.

2/լուծել նրանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերը.

3/նպաստել հողի հարկի և հողի վարձակալական վճարի գանձմանը՝ գտնելով այլ լուծում:

2.Ամսական ցուցանիշ ապահովելու դեպքում վարչական ղեկավարներին խրախուսել պարգևատրման տեսքով:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...9	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03
Քաղաք Մարալիկ